

ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՕԴՈՍՏՈՄ 3

ԱՆԵՔՍՈՆԴՐԻՍ

1917

տխր
թիւ 40?

ԵՐԿՈՒ ԵՐԵՔ⁽¹⁾ ԽՕՄՔ

ԱԶԱՏ ԽՕՄՔ որ ժամանակէ մը ի վեր
գաղթած էր, այսօր կրկին հրապարակ կ'ելլէ,
հաւանօրէն ժամանակ մը ետքը կրկին գաղթե-
լու համար: ԱԶԱՏ ԽՕՄՔ պարտոյ խօսքը չը
սիրեր, ուստի երբ ըսելիք մը չունենայ՝ լուա-
գոյն կը համարի լեզուն ծրարել և լուռ մնալ:
Ահա՛ գաղտնիքն ու բանալին այն յոյժ բանաւոր
և իմաստուն ընթացքին զոր արեւմտեանը չեն
հասկցած և սրուն սխալ մեկնութիւններ տուած
են:

Քաժանորդագրութիւն չենք բանար այս ան-
գամ:

Ինչո՞ւ:

Քանզի բազմաթիւ գառն փորձերէ յետոյ
համոզուեցանք թէ բաժանորդ կոչուած կենդա-

(¹) Կամ՝ իրեք, ըստ Ա. Արփիարեանի վերջին
շարաթիւերու հայերէնին:

նին տակաւին կիսավայրենի վիճակ մ'ունի ար-
տասահմանի հայութեան մէջ :

Իսկ Աղաս Խօսք ձեռքէ պիտի վաճառուի
հետեւեալ պայմաններով (¹) :

Ա. Եգիպտոսի մէջ ծնած և տեղացի հայե-
րուն համար՝ թիւը 10 փարա ողջ :

Բ. Երեք տարիէ ի վեր ընտանիքով եգիպ-
տոս հաստատուող հայերուն համար՝ թիւը 20
փարա ողջ :

Գ. Հինգ տարիէ ի վեր պետական պաշտօ-
նով եգիպտոս բնակող և կամ առևտրական տուն
հիմնողներուն համար՝ թիւը մէկ զրշ. ողջ :

Դ. Ամուրի հայերուն համար՝ թիւը 2 զրշ.
ողջ :

Կ'ըմբռնէք կոր այս տնօրինութեան իմաս-
տութիւնը :

Հարկաւ ո՛չ : Ես ալ նմանապէս :

Չմոռնամ ըսելու որ ԱԶԱՏ ԽՕՍԲԻ նա-
խորդ թիւերը պատասխանատու չեն այս թիւին
գրածներուն :

Անոնք անցեալ են մեր՝ ներկայ, քնչպէս
կ'ըսէ վիթթու Հիւկօ :

(¹) Այս պայմանները դրինք ներշնչուելով Ազգ.
կեդրոնական վարչութեան Պատկ. Խառն Ժողովէն
պատրաստուած եգիպտոսի վիճակին վարչական Հրա-
հանգէն :

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

ՈՒՂՂՈՒԱՆՔ

ԱՆԵՐՍԱՆԴՐԱՅՆԱԿ ՄՕՏԱՒՈՐԱՊԷՍ 544

ՀԱՅ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ԵՒ ԽԵԼԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ

Սիրելի վիճակակիցներ,

Ոճրագործ ե՛ր, սճրագործ ես, սճրագործ է՛,
ոճրագործ ե՛ք, սճրագործ է՛ք, սճրագործ ե՛ն:

Խելագար եմ, խելագար ես, խելագար է՛,
խելագար ե՛ք, խելագար է՛ք, խելագար ե՛ն:

Ահա՛ ինչ «խոնարհում»ի մը հասանք եօթ-
նամեայ սահմանադրական պայքարէ մը ետքը...

Այսօրուան օրս պատրիարքարանին մէկ ա-
պօրէն և բմահաճ տնօրինութեամբը Ալեքսանդրիւ-
հայ գաղութի ընտրողներուն կէսէն աւելին կը
զրկուին իրենց ընտրական իրաւունքէն «քրէական
յանցանք գատապարեալներու» կամ «ազգային
գործոց մատակարարութեան մէջ նենդութեամբ
բռնուած և ազգային ժողովներէն մէկուն կողմէ
գատապարտուած անձերու» և կամ «անբուժելի
խելագարներու» պէս:

Եգիպտոսի մէջ ամուրի մնալ կամ առետրա-
կան տուն չունենալ և կամ պետական պաշտօն-
եայ շրջակ հաւասար է սճրագործ ըլլալու,
զեղծարար ըլլալու, խելագար ըլլալու, ահա
կ. Պոլսոյ խառն ժողովէն սահմանեալ վարչա-
կան հրահանգը, Եգիպտոսի վիճակին համար:

Եթէ Ալեկսանդրիոյ Թաղապետութեան մէջ
հինգ տարիէ ի վեր կայսրի մաքրող հայ մը
կայ, քուէ տալու իրաւունք ունի՝ որովհետեւ պե-
տական պաշտօնեայ է: Եթէ Ճինանայի մէջ հինգ
տարիէ ի վեր հանրատուն մը բանեցնող հայ մը
կայ, քուէ տալու իրաւունք ունի՝ որովհետեւ ա-
ռևտրական տուն հիմնած է: Իսկ եթէ ամուրի
հայ մը կայ որ հինգ տասը տարիէ ի վեր հոս
հաստատուած է և ամսական հարիւր սկի եկա-
մուտովը կ'ապրի, զրկուած է իր քաղաքացիա-
կան իրաւունքներէն. անոր սեզը Հատրայի
բանտը կամ Ապպասիէի յիմարանոցն է:

Քանի մը ենթադրութիւններ կ'ուզեմ՝ ուզ-
ղել սակայն Կ. Պօլսոյ կեդրոնական վարչու-
թեան և Ալեքսանդրիոյ Բնարտական Ժողովին:

Երեք տարիէ ի վեր կնոջը հետ հոս հաս-
տատուած հայ մը որ ընտրող և ընտրելի է,
երեսփոխան կ'ընտրուի, և ահա ամիս մը ետքը,
փորհարութեան մը հետևանքով կինը կը մեռնի,
ի՞նչ պիտի ըլլայ մարդուն վիճակը: Քաղաքացիա-
կան իրաւունքները պիտի զոհուին կնոջը փոր-
հարութեան և մարդը՝ պիտի արտաքսուի՝ Երեսփո-
խանական Ժողովէն: Տարբեր մէկու մը վրայէն գի-
շեր ատեն վերմակը վար ինկած և փորը պա-
շած ըլլալու պարագան բաւական պիտի նկատու-
ուի զիս կամ բեզ պարզ ոճրագործի մը կամ խե-
շագարի մը հաւտարեցնելու:

Հինգ տարիէ ի վեր պետական պաշտօնով
Եգիպտոս կը բնակիս, օրինակի համար՝ Ներքին
Գործոց Նախարարութեան արտաքննոցները կը
մաքրես. հպարտ ես, սրովհետեւ ընտրող ես և քուէ
տալու իրաւունք ունիս, բայց օրին մէկը նիւ-
թական լուսազոյն պոյմաններով պաշտօն մը կը
գտնես վաճառականի մը քով և հրաժարական
կուտաս պետական պաշտօնէն: Ի՞նչ պիտի ըլլան
քաղաքացիական իրաւունքներդ. պիտի ստիպուի
արտաքննօյր ձգել զանո՞ք և այնպէ՞ս գուրս
ելլել:

Ասիկէ զոտ ամուսնացեա՞լ պիտի նկատուի
այն սրուն կիներ ամուսնական յարկը լքած՝ ու-
րիշի մը հետ կը կենակցի: Իրապէս ամուսնաց-
եա՞լ է այն որ թէև երեք տարիէ ի վեր կնոջը
հետ Եգիպտոս հաստատուած է, սակայն հինգ
տարիէ ի վեր արգէն անկարող է իր ամուսնա-
կան պարտականութիւնը Ֆիզիքապէս կատարե-
լու, այդ անկարողութիւնը զինքը կարօ՞ղ պիտի
ընէ քուէ տալու:

Ընտրական իրաւունք, ս՛ր տեղումք
ստիպուեցանք փնտուել քեզի:

Ու յետոյ, այդ վարչական հրահանգին զոր-
ծադրութենէն ետք, ա՛լ խերը յետ մեր սպա-
գայ Ներեպոխաններուն և քաղաքական ժողովի
անդամներուն ընտանեկան խաղաղութեան:

Ամուսնոյն ամենափոքր մէկ զխտոզութեան

վրայ կինը իրաւունք պիտի ունենայ էրկանը
երեսն ի վեր պստալու :

— Լռէ, դժն ալ, իմ շնորհիւս մարդու
կարգ անցար ու ելեր ջաղք կ'ընես կոր. եթէ
ես չըլլայի ո՞ւր տեղէն կրնայիր երեսփոխան
ըլլալ :

Եւրոպացի կիները ընտրողի իրաւունք կը
պահանջեն տարիներէ ի վեր. հայ կիները զոյն
կը շնորհեն իրենց ամուսնոյն՝ երէկուքնէ ի վեր :
Ի՞նչ հսկայաքայլ յաւաճգիմութիւն, ի՞նչ պան-
ծալի տեսարան : Տիկին Մառի Պէյլէրեանի
Արտեմիսը ձայն բարբառոյ յանապատի չմնաց .
կատարեալ է հայ ֆէմինիզմի յաղթանակը ,
յաղթ դանակ արդարեւ, խեղճ էրիկմարդոցս
զլլտին վրայ սպառնական կախուած :

Իսկ որո՞նք են առևտրական տան մը սահ-
մանները, ըստ վարչական հրահանգին : Եթէ
դիմենք Եկեղիցիի պատէն կախուած ընտրողնե-
րու ցանկին՝ կը տեսնենք թէ չափազանց առաձ-
գական է այդ և ծխավաճառութեան խոշոր տուն
մը եղբայրակցած է մանրավաճառի կամ վերերզակի
շնչին կրպակի մը հետ : Երեքիւզոտ ֆէս և երկու
ոջլոտած հին բալթօ կախէ՛ կէս մեզը մեծութեամբ
ծակի մը մէջ և ահա՛ կ'ունենաս առևտրական տուն
մը և ընտրական իրաւունք կը վայելես, բայց ուրիշ
մը որ մեծ վաճառատան մը մէջ քսան ոսկի ամ-
սակահոփ արկղակալի պալտօն կը վարէ, զրկուած

է քաղաքացիական իրաւունքներէն, որովհետեւ
պարզ պաշտօնեայ մը կը նկատուի :

Ե՛վ վարչական Հրահանգ Ի՞նչ խաղբութիւն-
ներ կը կատարուին քու շնորհիւ :

*
* *

Ահաւասիկ ընտրական այդ նոր հրահանգը
Երբ լաւոր անճառնի անպատեհութիւններով :

Եւ գա՛ք, Ընտրողական Ժողովի անդամներ՝
Ընդհանրապէս, և վա՛ճ՛մ. Միհրան Խան Գալֆա-
եան, Տ. Մ. Տաճատեան և Տ. Յ. Շնորհքեան՝
մասնաւորապէս, գա՛՛ք, Ալեքսանդրիւյ Սահմա-
նադրական պայքարը երկնող երբորդութիւնը,
ինչպէ՞ս չորբքեցիք Սահմանադրութիւնը հիմնա-
յտտակ քանդող վարչական Հրահանգին այդ Յրդ
յօդուածին դէմ :

Ընտրողի իրաւունքը 25 տարին լրացուցած
ամէն Հայու անկապտելի իրաւունքն է և ո՛չ թէ
մեր՝ այլ ամէն սղգի Սահմանադրութեան հիմը
կը կազմէ :

Դուք որ վեց տարի տուջ կատարուած
ընտրութիւնը վիժեցուցիք անդի չտուու համար
Սահմանադրութեան մէկ կէտին բանաբարմանը,
ինչպէ՞ս լուռ հանդիսականներ մնացիք երբ ձեր
ներկայութեանը կառավնատեցին այդ Սահմա-
նադրութիւնը...: Ի՞նչ է՛ ըսեմ, ո՛չ, լուռ հանդի-
սականներ չմնացիք, այլ «ամենախորհին շնորհա-

կալութիւններ» յայտնեցիք զԼիստաման գործազուժեանը համար: Եւ ձեր երէկի զինակիցները, որոնց հետ միթիւնկներ սարքած, ճառեր խօսած, ցոյցեր ըրած, ու սիւնակներ ու սիւնակներ լեցուցած էիք Սահմանադրութեան յաղթանակին համար, ուրացաք և թող սուկը որ իրենց քաղաքացիական անբռնաբարելի իրաւունքներէն մերկացուին, հասարակ չարագործներու կամ խելագարներու պէս: Հայկ Էքիզէրի մը քաղաքացիական իրաւունքները պաշտպանելու համար կ'արժէր բողոքել, իրար անցնիլ և վերջապէս խանդարել կատարուած ընտրութիւն մը, իսկ երբ ԾԾԻ մօտ ազգայիններու իրաւունքները սոնակիս կ'ըլլան պէտք է «ամենախորհին շնորհակալութիւններ» յայտնել:


Սկզբունք, ուղղամտութիւն, ինչ աղուր կեցածիքներ են եղեր:

Եւ, ս'վ յաւիտենական ծիծաղելիութիւն աշխարհային դիպաց, եթիւնամեայ սահմանադրական պայքարէ մը ետքը, այսօր Եգիպտոսի մէջ, Սահմանադրութիւնը կը թողուի և վերջնականապէս փոքր կը դրուի Միհրան Տամատեանի և Յ. Շնորհքեանի ձեռքով:



ԱՐՏԱՌՈՅ ԿԵԱՆՔԷՆ

ԽԵՂՃ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ



Ու եղաւ որ Կիրակի առտու մը, կանուխ, բարեկամս Օտեան որ ձրի լրագրի բարի համբաւը կը վայելէ, եկաւ գովել ինձի թէ ազնուունի տիկին Սահմանադրութիւնը որ շատոնց արդէն թողախտէ կը տառապէր ահաւոր ընդհարում մը ունեցած է, քանի մը օր առաջ, և ծանրապէս վիրաւորուած, փոխադրուեր է Ազգ. Առաջնորդարան, յատկապէս հիւանդանոցի փոխուած:

— Երթանք, ըսաւ, բարեկամս, երթանք կատարելու մեր հնաւուրց ընկերութեան պարտականութիւնը և տեսնելու վերքերը մեր դժբաղդ Սահմանադրութեան...

Ու ահա տխրադէմ ու լուաքայլ մեր վայրէջքը Ապու Տարտարէն:

Մահու ցաւ մը ամէն կողմ սաւառնած: Ո՛ւր ան ճոռտողուն իրարանցումը Ալեքսան Աղային սրճարանին, ո՛ւր ան պողտող ու զուարթադէմ պէտէկճիները, ո՛ւր ան վազվառող հայութիւնը, ո՛ւր ան ամենօրեայ եռուզեռումը... Ամբողջ գերեզմանատուն մը՝ եկեղեցիին պարտէ՛զն ալ բոյսերը՝ գլխահակ, թռչունները հեկեկուն, արմաւենիները՝ արտասուալի և սեւերիզ խոշոր մարմարեայ տախտակի մը վրայ ակնառու արձանագրութիւն մը Առաջնորդարանին ճակտին կպած.—

ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԵԼԱՆՈՑ

Ուհ, խեղճ Աստուր, փայլուն կոճակներով ու սուրով համազգեստին տեղ, հիւանդապահի սպիտակ շապիկը դո՛ւն ալ պիտի հագնէիր, հապա դուն, խե՛ղճ թալեան, դո՛ւն ալ պիտի մտնէիր այսպէս սեւթոյր մեռելաթագի զգեստին մէջ, և վարժապետներ և քարտուղարներ և հաշուակալներ՝ բոլորը բժշկի օգնականներ դարձած, ոմանք իրենք ալ հիւանդացած, խե՛ղճ զրասեղաններ՝ բոլորին տեղ հիմա շարք շարք անկողիններ ու խեղճ ժողովասրահ՝ ան ալ վերածուած օրերասիօնի սենեակի:—

Ճնշող լուսթիւն մը ամէն կողմ :

Դանդաղօրէն ու ծանրախոհ կ'ելլենք սանդուղնէրէն վեր, ու ձախ կողմի երկրորդ դուռնէն ներս արդէն կը տեսնենք կանաչ ասուիով ծածկուած ընդարձակ սեղանին վրայ նուազած մարմինը Սահմանադրութեան :

Ա. . . : Անդամահատութեան վայրկեանն է, շատ եղերական բոպէի պատահել է մեր այցելութիւնը: Ու կը տեսնեմ քաղաքին ամէնէն երեւիլի վիրարութիւնը կարգաւ շարուած հիւանդին չորս կողմը . . . Խաներ, Պէյեր, նախկին յեղափոխականներ և նախկին անդամներ Աղքատախնամի, ու մանաւանդ տէրտէրներ և վարդապետներ, ամէնքն ալ ճերմակ երկայն շապիկներ հագած, որին ձեռքը ասիտ ֆէնիքի շիշ մը, միւսին

ափին մէջ բամբակի փերթեր, իսկ բոլորին ղէմքերը
աշաւոր վայրկեանին ամբողջ ծանրութիւնովը տպաւոր-
ուած...

Եւ ահա հռչակաւոր վերաբոյժ Տատրակունի Վար-
դապետ, ամէնուն հիացումին մէջ, կ'անցնի առաջ հսկայ
դանակ մը ի ձեռին . . . Ճարտարապետեան խան կը
բռնէ շուտով հիւանդին ոտքերէն... ուզին հարուած մը,
և ահա արդէն Տիկին Սահմանադրութիւնը առանց
սրունքի...: Վարդապետ անդամահատը գոհ իր յաջողու-
թենէն կ'առաջարկէ, յօգուտ նոյն ինքն Տիկին Սահ-
մանադրութեան, կտրել նաև անոր վրայէն մէկ քանի
աւելորդ մասեր, ինչպէս քիթը, ականջները, թևերը՝
որպէսզի չչարժին, փորել անոր աչքերը՝ որպէսզի
չտեսնէ, հանել ակոսները՝ որպէսզի չխածնէ...: Եւ
որոտընդոստ ծափահարութիւններու ժխորի մը մէջ
վայրկեանապէս կը կատարուին բոլոր այդ հրաշական
գործողութիւններն ալ, այն ատեն միայն ժամացոյց-
ներուն նայելով Տօքթ. Մատեան և Տքթ. Շ. Նորք-
եան կը պահանջեն որ արթնցուի հիւանդը, որովհետև
ժամանակը անցած է...:

Եւ ահա մեր խեղճ Սահմանադրութենէն կոյր,
անականջ, անթև, անսրունգ, անքիթ, անակոսայ հրէ-
շային այլանդակութիւն մը միայն մնացած մէջտեղը,
զոր շուտով կը փոխադրեն Ճարտարապետեան խանի
բնակարանը, իբր վարձատրութիւն օրէրասիօնի պա-
հուն այնքան խելօք կեցած ըլլալուն համար...:

Եւ երբ արմաւինինները կուլան, քարերը կը ճա-

Թին, բոյսերը կը տիրին, թռչունները կը հեկեկեն՝
Պարոն Ժողովուրդը անգին Պապ-Սիրա օղի կը խմէ
անտարբեր, իսկ Տըթ. Տատրակունի աւ հունեատի՝
կենացը իր մեծ վարպետին՝ Տըթ. Անտառեանին, ան
աւ տնօրէն Գում-Գափուի Ազգային Կեդրոնական Ան-
կելանոցին...:

ՃԱՅԷՆ

Յ. Գ. Երկու օր յետոյ միայն, բարեկամիս Օտեանին
հետ իմացանք որ, Տիկին Սահմանադրութեան գլուխը
կտրելու գործը, յետաձգուած է ձմեռուան, շնորհիւ
Տըթ. Տ. Մատեանի որ քննելով անոր մարմինէն
մնացածը, շատ տկար գտած էր զայն նոր օրէրաւիօնի
մը ենթարկելու համար:



ԼԱՐՍԱՆՈՔ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ մեր
բարեկամը Տ. Երուանդ Անդրէասեան, աէր և
վարիչ The Morning Star քառթ բօթաղի խա-
նութին, վերջերս ամուսնացած է Օր. Մարի
Աճէմեանի հետ:

Տ. Ե. Անդրէասեան համակրելի և գործուն-
եայ երիտասարդ մըն է որ սիրելի գարձած է,
իր բնաւորութեամբ, բոլոր զինքը ճանչցողներուն,
իսկ Օր. Մարի Աճէմեան, որ բնական շնորհին

կը միացնէ խնամեալ կրթութիւն մը, պատիւ
կը բ'րէ Ալեքսանդրիոյ հայ իգական սեռին :

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները նորա-
պսակ ամուլին :

ՆՇԱՆՏՈՒՑ

Անցած կիրակի օր տեղի ունեցաւ քաղաքիս
ծանօթ գեղադարձ Տ. Գ. Թօքթաթլեանի բնակա-
րանին մէջ, Տ. Լևոն Շիշմանեանի նշանախօսու-
թիւնը Օր. Էօթէնի Թօքթաթլեանի հետ :

Տ. Լևոն Շիշմանեան թուովայի ընկերու-
թեան մէջ կարևոր պաշտօն մը կը վարէ և իր
գործունէութեամբն ու պարկեշտութեամբ ամե-
նու՛ն համակրելի ու սիրելի դարձած է :

Օր. Է. Թօքթաթլեան ամենախնամեալ կըր-
թութեամբ մը օժտուած՝ և միանգամայն տա-
ղանդաւոր զաշնակահար մըն է :

Մեր շնորհաւորութիւնները նմանապէս այս
նշանախօսութեան առթիւ :

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱՅԷ՛Ք

Թէև խոտապած էինք, ամառնային ամբողջ
սէզօն մը անցնել մեր «Ժառուէն Բէրիւպլիք»
թատրոնին մէջ, բայց բեմին անյարմարութիւնը՝

և օգերուն խոնաւութիւնը արդեւք գարձան պէտք եղած փայլովը պահել մեր ներկայացումները. բայց փափաքելով չորս վերջին և փայլուն ներկայացումներ ևս սարքել նոյն թատրոնին մէջ, որոշեցինք այս գիշեր ներկայացնել «Հօր մը խղճին խայթը» կամ «50,000» Ֆրանքոսոյ մուրհակը, անուն զաւէշտախտուն թատերգութիւնը, երեքշաբթի «Չէզար Պօրճիա», հինգշաբթի «Սիրոյ Զոհերը» և շաբաթ՝ վերջին ներկայացում «Շոպլութեան հետևանքը» անուն խիստ բարոյալից թատերգութիւնները:

Յիշեալ ներկայացումները փայլուն անցնելու համար՝ խումբս ամէն ջանք և միջոց չէ խնայած թէ հագուստի և թէ տէքօռի մասին:

Վստահ եմք թէ՛ թատերասէր հասարակութիւնը իր ներկայութեամբ պիտի պտտուէ մեր այս վերջին չորս ներկայացումները. կշտանալու համար արտասուելու չափ խնդալէ և չլացնելու համար խնդացնել ուզող արուեստագէտը որ՝ իւր ամբողջ ուժերը պիտի թափէ գոհացնելու թատերասէր հասարակութիւնը:

«Զուարթ» խումբ
Տնօրէն Ա. Պէնլեան

Յ. Գ. Միջնարարներուն՝ տասը հոգիէ բաղկացեալ նուագախումբ մը պիտի նուագէ ընտիր կտորներ:

Խմբ. Ցառալի է որ Ալեքսանդրիոյ Հայ հասարակութիւնը տակաւին պէտք եղածին չափ չքաջալերեց Տ. Պէնլեանի քովտիի խումբը : Տ. Պէնլեան, իբրև Ժողովրդական քովիք, արուեստագէտի ճշմարիտ ձիրքեր ցոյց կուտայ, մանաւանդ թրքական կեանքէ քաղուած զաւեշտներու մէջ, ինչ որ իր մասնագիտութիւնն է :

Անոնք որ մեր անդական ազգային խնդիրներու համար օրն ի բուն կը յուզուին ու արցունք կը թափեն՝ պէտք է որ անպատճառ գիշերները երթան «Զուարթ» խումբի ներկայացումներուն, կուշտ ու կուռ քահններով վանելու համար ցերեկուան տխրութիւնը :

ՎՍԵՄ. ԱՐԲԱՀԱՄ ՓԱՇԱ ԲԱՐԹՈՂԻ

ՄԷԿ ՆՈՐ ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ

Յայտնի է որ Էտիրնէի վերջին մեծ հրդեհին Հայոց Եկեղեցին և Դպրոցը ևս այրած են : Անոնց վերաշինութեանը համար հանգանակութեան ձեռնարկուած ըլլալով, Ս. Պատրիարք Հայրը նամակաւ մը գիմում՝ ըրած է. վսեմ. Աբրահամ փաշայի որ անսխլապէս 1250 Ֆր. զըրկած է այդ նպատակով և միանգամայն փափաք յայտնած է որ Առաջնորդարանի կողմէ ևս հանգանակութեան մը ձեռնարկուի :

ՍԱՆՏՎԻՉԻ ԽՆԴԻՐԸ

Ընտրողական ժողով գումարուած օրերը Առաջնորդարանի մեծ սրահին մէջ կերուած կամ ուտուելիք սանսովիչներուն դրամները կրկին Ազգատախնամի սնտուկէն պիտի վճարուին:

Վարչական Հրահանգին մէջ այդ մասին տնօրինութիւն մը չտեսանք, այսուհանդերձ խորհուրդ կուտանք Ընտրողական ժողովի անդամներուն որպէսզի կերակուրնին սինիով միասին բերեն, Ազգատախնամին վրայ բեռ չըլլալու համահ:

ԾԱՆՈՒՅՈՒՄ.— 52 տարեկան օրիորդ մը պատրաստ է ամուսնանալ ընտրող և ընտրելի ըլլալու փափաքող 25 տարին լրացուցած երիտասարդի մը հետ որ ամիսը առ նուազն 20 ոսկի կը շահի: Գիմել ուր որ անկ է:

ԽՄԲԱԳԻՐ

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

Տպարան «ԲԱՅՅԻ» Ալեքսանդրիա
